ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

«ԶԱստուած փնտռելու ճամբին ես գտայ Ս. Էջմիածինը ու իմ Հայրենիքը եւ խոնարհուեցի ճակատագրի առաջ: Վազգէն Ա»:

Սիրելի Վեհափառ Տեր,

Սրբ. Հայրեր, տիկնայք ու պարոնայք,

Թույլ տվեք չբաժանել Վեհափառ Հոր այս կարծիքը: Վեհափառ Տեր, Աստված ողորմած եղավ մեր հանդեպ, Ձեր ժողովրդի հանդեպ. գտավ Ձեզ ու բերեց և գիտեր, որ բերում է չարչարելու, տանջելու մեր փրկության համար: Բայց Տերը գիտեր նաև, որ փոխհատույց է լինելու, որ Ձեզ էր ընտրված հրաշագործ մի աշխատանք, ինչպես նաև բախտը՝ տեսնելու և օրհնելու հայ ժողովրդի հազարամյա երազանքը՝ ազատ ու անկախ Հայաստանի հռչակումը:

Երեսունութ տարին հազարամյակների մեջ մեծ թիվ չէ, բայց այդ ընթացքում կատարված աշխատանքը և՛ ծավալով, և՛ բովանդակությամբ կընհիշվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության մեջ որպես զարմանահրաշ մի ժամանակաշրջան, երբ աննախադեպ ծաղկում ունեցան մշակույթի բոլոր ասպարեզները, այդ թվում նաև՝ ազգայինը:

Մեր գնահատականը ճիշտ կընկալվի, եթե նախապես մի փոքր անդրադառնանք այն խնդրին, թե ինչ ժառանգություն հասավ Վեհափառ Տիրոջը, և ինչպիսին էր իրավիճակը Մայր հողի վրա և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Այստեղ տիրում էր անտարբեր և անբարյացակամ պետական կեցվածք, հիմնականում թելադրված կենտրոնից, բնականոն զարգացման ճանապարհները փակ, արգելակումների և վախի մեջ՝ հազիվ լսվում էր Հայ Առաքելական Եկեղեցու զարկերակի բաբախումը:

Ամենայն Հայոց Հայրապետը ամենից առաջ պետք է գտներ և ապա փորձեր շարունակել անցյալից եկող կապերը, առանց որոնց անհնարին էր Եկեղեցու լիարժեք գործունեությունը: Մեր ժամանակներում անհրաժեշտ էր նաև նորովի գնահատել և վերականգնել այն ամենը, ինչ հավաքված էր Մայր Աթոռում հեռավոր ժամանակներից, նրանց տալով նաև գիտական արժեքավորում:

Նախկինում հայ մշակույթը հիմնականում գործել է Եկեղեցու շուրջ՝ հաղորդելով ստեղծագործություններին գործածական, կիրառական իմաստ,

ներգրավելով մեծ մասամբ ժողովրդական վարպետներին: Պրոֆեսիոնալները գործին մասնակցել են առիթից-առիթ, իսկ հայկական գաղթօջախներում պատվերները կամ կատարված նվիրատվությունները կրել են տեղի կնիքը: Եվ այս է պատճառը, որ արվեստի շատ գործեր չէ, որ ճեղքել են հոգևոր շրջանակը՝ մտնելու համար ընդհանուր մշակույթի ոլորտը:

Հաստատենք, որ Վեհափառ Տիրոջը հաջողվեց ոչ միայն իրագործել վերը նշված խնդիրները, այլ նաև կյանքի կոչել, կենդանացնել ասպարեզներ, որոնք համարվում էին կորված կամ մեռած:

Այս 38 տարիներից 34-ում ես եղա այդ աշխատանքների մասնակիցը և ականատեսը այդ տարիներին ստեղծվեցին եկեղեցական արվեստի բազմաթիվ գործեր, որոնք մտան նաև հայ աշխարհիկ արվեստի հարստությունների մեջ:

Վեհափառ Հայրապետը ամենից առաջ ձեռնամուխ եղավ դուրս մղելու եկեղեցիներից օտար, պատահական, ցածրաճաշակ արվեստի գործերը՝ սկսելով Մայր տաճարից: Նրանց տեղը գրավեցին մեր դասական նկարչության հեղինակների սրբապատկերները, նոր գործված վարագույրները, խաչվառները, մոմակալներ և եկեղեցական այլ պարագաներ՝ հավատի տներին ներարկելով հայաշունչ ոգի:

Այս գործի համար պետք եղավ պետությունից ետ ստանալ եկեղեցական նկարչության զգալի թվով գործեր, որոնք ժամանակին բռնազավթվել էին: Դրանք վերականգնման ու նորոգման աշխատանքներից հետո զետեղվեցին համապատասխան տեղերում: Այս աշխատանքները կատարվեցին Սանկտ-Պետերբուրգից հրավիրված մասնագետների կողմից:

Կցանկանայի ձեր ուշադրությունը բևեռել այն ասպարեզների վրա, որոնցում գործեցին պրոֆեսիոնալ արվեստագետները՝ նոր որակ հաղորդելով Մայր Աթոռի արվեստի գործերին:

Նախ թվարկենք ասպարեզները՝ հրատարակչական գործ, նկարչություն և քանդակագործություն, ոսկերչություն ու արծաթագործություն, տաք մետաղի մշակում, փայտարվեստ, գործվածքեղեն, թանգարանների բարեկարգում և հիմնադրում, հոգևոր երաժշտություն:

Այժմ կանգ առնենք այն ասպարեզների վրա, որոնք նորույթ էին մեզանում՝ շատ հնում թողած լինելով իրենց հետքը: Նախ նշենք վաղամեռիկ նկարիչ Հովհաննես Մինասյանի որմնանկարները Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, առաջին և լուրջ, ինչպես նաև խոշոր և հաջող փորձը՝ վերականգնելու անցյալի ավանդույթը: Դրան հաջորդեց տաք մետաղի մշակման զարթոնքը: Մի արվեստ, որից մասունքներ ունեինք թանգարաններում և Հեթում թագավորի ջահը՝ պահպանված Էջմիածնում: Հրաշալի մոմակալներ՝ Մայր տաճարի և Նոր Վեհարանի համար, ջահեր, ցանցաճաղեր (արվ. Վ. Օհանյան), հայաշունչ գործեր, որոնք դարձան ելակետ, և այսօր մեր մշակույթի այդ ժանրը ապրում է լիարժեք կյանքով:

Էջմիածնում կատարվեցին առաջին և լուրջ փորձերը՝ ստեղծելու հայաոճ կահույք թե՛ եկեղեցիների ներքին հարդարանքի և թե՛ վանական շինությունների համար: Դրանցից նշենք Ս. Հռիփսիմե վանքի դռներն ու մոմավաճառի սեղանը, ապա վանքի բակում գտնվող վանատան և սեղանատան ներքին կահավորումը, ինչպես նաև Էջմիածնի Մայր տաճարի ներքին կայքը. սա զարթոնք է փայտարվեստի, որն անկասկած կունենա իր շարունակությունը և ազդեցությունը, (նկ. Գ. Խանջյանի նախագծերով, վարպետներ՝ Ռ. Տեր-Թադևոսյան և Վ. Կարապետյան): Եվ վերջապես գործվածքեղենի



Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

մասին: Գործերով, ասեղնագործություններով, վարագույրներով և այլ գործերով Մայր Աթոռը հարուստ էր, սրանց ավելացավ գոբելենը, այս արվեստը մեզ մոտ չի եղել. ասում են գոբելենը ցուրտ կամ սառը երկրի մշակույթ է:

Արդիական գոբելենի արվեստը այսօր Հայաստանում կա և զարգանում է հաջողությամբ, բայց դասականը նորույթ էր, որը իրագործվեց Վեհափառի կամքով՝ «Իջման տեսիլք», «Հայոց այբուբեն», «Վարդանանք» և «Վերածնվող Հայաստան» գործերով (նկ. Գ. Խանջյան): Այս գործերի ջերմը ընդունելությունը մեկ անգամ ևս ապացուցեց, որ Վեհափառ Հայրապետը քաջ գիտե, թե ինչ է ուզում, ինչի համար և երբ: Ես կարծում եմ, որ բոլոր արվեստագետները, որոնք աշխատակցում են Վեհափառ Տիրոջ հետ, կասեն, որ նրա հետ աշխատելը հեշտ է, քանի որ նրա իմացական աշխարհը մեծ է, միաժամանակ նաև՝ դժվար, քանզի նորից նրա իմացական աշխարհը մեծ է:

Աննախադեպ ծաղկում ապրեցին ոսկերչական և արծաթագործական ասպարեզները: Այստեղ գործեցին այնպիսի վարպետներ, ինչպիսիք են՝ Ժ. Զուլոյանը, Բ. Արզումանյանը, Լ. Բերբերյանը, Մ. Թամրազյանը: Ոչ միայն այս ժանրում, այլ նաև մյուս ժանրերում գործած վարպետների, արվեստագետների անունները ու նրանց կատարած աշխատանքները ես չեմ թվարկելու. դրանք մանրամասն մեկնաբանված են պրոֆեսոր Վ. Հարությունյանի «Եկայք շինեսցուք» գրքում, բայց չեմ կարող մի քանի խոսք չասել Բ. Արզումանյանի և Ժ. Զուլոյանի ստեղծած գործերի, հատկապես «Հայոց այբուբենի» «Ոսկյա խաչի» մասին, որոնք դուրս եկան Մայր Աթոռի շրջանակներից և մտան մեր արվեստի գանձերի շարքը: Այս աշխատանքներում առկա են գեղագիտական հորինվածքի բարձր թռիչք և կատարողական անթերի վարպետություն: Դիտողները ոչ միայն հմայվում են վերը նշվածով, այլև նրանց զարմացնում է հայ ժողովրդի բացառիկ սերը դեպի իր այբուբենը: Իզուր չէ, որ ասվել է՝ ոսկուց ամեն բան տեսել էինք աշխարհում, բացի այբուբենից: Ժամանակը չի ներում, որպեսզի այստեղ խոսեմ բազմաթիվ եկեղեցական գավազանների, մատանիների, խաչերի, կաթսաների, աղավնիների մասին, որոնցից յուրաքանչյուրը արվեստի ուշագրավ երևույթ է և գալիս է լրացնելու այդ ժանրի արժեքների հավաքածոն:

Հրատարակչական գործունեությունը, որը միշտ եղել է Սուրբ Էջմիածնի ուշադրության կենտրոնում, Վեհափառի օրոք մի նոր թափ և որակ ստացավ. եղան հրաշալի լույսընծայումներ, որոնցից միայն երկուսը կնշեմ՝ «Խաչքարերը» (հեղ. Լ. Ազարյան) և «Էջմիածնի գանձերը»: «Խաչքարեր» գիրքը առաջին փորձն էր կազմելու ընտրված և ի մի բերված խաչքարերի մի ալբոմ՝ համատեղ տեսնելու համար հայ մշակույթի եզակի այդ կոթողները: Դա հնարավորություն էր տալիս մասնագետներին թե՛ հայ և թե՛ օտար, լայնորեն ծանոթանալու և գնահատելու քանդակագործական արվեստի այդ յուրահատուկ ստեղծագործությունները: Իսկ «Էջմիածնի գանձերը» ոչ միայն գրքային արվեստի նվաճում էր, այլ նաև մեծ ու փառավոր տարածումը հայ եկեղեցական արվեստի սքանչելի ստեղծագործությունների: Շատ քչերը թերևս գիտեն, որ Լիսաբոնի Կյուլպենկյան հաստատությունը 100 համարակալված օրինակ պատվիրեց այդ գրքից և տարածեց աշխարհի կարևոր մշակութային կենտրոններում՝ այդպիսով այն սեփականությունը դարձնելով աշխարհի արվեստասեր հասարակայնության:

Եվ, վերջապես, թանգարանային վերանորոգման և հիմնադրման դժվարին ասպարեզը, որը վեր է ամեն գնահատականից: Այդ մասին հանգա-

մանորեն կխոսի արվեստաբան Մանյա Ղազարյանը, բայց ես չեմ կարող չասել, որ այս կարևոր գործը կատարյալ դարձրեց եկեղեցական արվեստի հայաշունչ դեմքը՝, այցելուներին գերելով հայ ժողովրդի բազմաշնորհ ունակություններով և նրա հոգու գեղեցկությամբ:

Անգնահատելի է Ամենայն Հայոց Հայրապետի վաստակը: Նա իր գահակալության 38 տարիների ընթացքում հայրենիք վերադարձրեց արվեստի բազմաթիվ գործեր՝ նկարներ, գործվածքներ, քանդակներ, ձեռագրեր, նշանավոր հայ գործիչների արխիվներ: Ակնհատես եմ եղել, թե ինչպիսի զգայուն վերաբերմունք էր ցուցաբերում Հայրապետը յուրաքանչյուր գործի ընկատմամբ, ինչպիսի անհանգստություն էր ապրում, մինչև որ այն կարողանում էր հասցնել հասցեատիրոջը: Այդ գործերի թվում են եղել Այվազովսկու, Մախոխյանի, Մահտեսյանի, Ալխազյանի և այլոց գեղանկարները, ինչպես նաև Թորոս Ռոսլինի և անանուն գրիչների ու մանրանկարիչների ձեռագրեր:

Այս ամենը արվել է 38 տարիների ընթացքում, հսկողության և երկյուղի զգացողության տակ, բայց պետք է ազնիվ լինել և ասել, որ Վեհափառի և ոչ մի ձեռնարկում և ցանկություն չի մերժվել տոտալիտար հասարակարգի հայ ղեկավարների կողմից: Սակայն դա չէր խանգարում, որ կենտրոնից եկած շրջաբերականներով հաճախ խափանվեր կամ արգելվեր այս կամ այն գործը: Կատարվել է մեծ աշխատանք՝ շնորհիվ Հայոց Հայրապետի իմացության, իմաստության, նվիրումի, անխախտ հավատի և անձնական հմայքի:

Սիրելի Վեհափառ Տեր, թույլ տվեք նվաստիս վերջացնել ասելիքս Աստվածորդու՝ Քրիստոսի հետևյալ խոսքերով—«Ես չասացի, որ դուք չեք չարչարվի, ես չասացի, որ դուք չեք տանջվի, այլ ես ասացի, որ դուք կհաղթեք»:

Վեհափառ Տեր, Դուք հաղթեցիք և դեռ պիտի հաղթեք:

Աստված թող Ձեզ պահի և պահպանի Մայր Աթոռի և հայ ժողովրդի համար: